
Ինչպես հեղինակի մյուս գրքերում՝ «Լույսերը ես կհանգցնեմ», «Ընտելանում ենք», «Տոխայ խուրմա» և այլն, այստեղ էլ Իրանի կերպարը բառացիորեն բզկտվում է հնի՝ ավանդականի և նորի պայքարում: Անխուսափելի մի պայքար, որ չի շրջանցում նաև վաղուց անտի այստեղ հաստատված փոքրաթիվ հայ համայնքի կյանքը: Մեծ զգացմունքայնությամբ գրված այս գործում, որը հերոսի կյանքի երեք տարբեր փուլերն է ներկայացնում, հայ համայնքը պատկերված է ներսից: Հերոսներն ապրում են հնի ու նորի սահմանագծում և նրանց փոքրիկ ուրախություններն ու մեծ տխրությունները, մարդկային պարզ երջանկություններն ու խոր վերքերը հաճախ պայմանավորված են նաև համայնքային ներփակվածությամբ, ազգային քարացած սովորություններով, և, իհարկե նաև կրոնական տարբերություններով...

Ընդամենը 172 էջ, բայց լիարյուն կյանք, և լիարժեք կերպարներ...

«Չատկի նախօրեին» եռագրությունն արժանացել է Իրանական և միջազգային մի շարք մրցանակների և թարգմանվել բազմաթիվ լեզուներով:

Ջոյա Փիրզադ

Ջատկի նախօրեին

Վիպակներ

Բնագրից թարգմանեց Գևորգ Ասատրյանը

Երևան
Yerevan
2015



ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
EDIT PRINT
Publishing House

Բարի գալուստ ստենք նրան...

Հարցազրույցներից մեկում, «իրանական գրականության բարձրագույն աստղ» Ջոյա Փիրզադն ասել է. «Հայկական և պարսկական մշակույթները մոտիկ լինելով հանդերձ, բավականին առանձնահատուկ են... Հայերը 400 տարի ապրում են Իրանում և չեն կորցրել իրենց ինքնությունը, լեզուն, մշակույթը... Ես երկու մշակույթի կրող եմ՝ հայկական և իրանական... Հայերը շատ նախանձախնդիր են իրենց լեզվի, ազգային սովորությունների նկատմամբ: Սկզբում ես չէի ընդունում այդ անհանդուրժողականությունը: Ինքս էլ շատ եմ տուժել դրանից: Ինձ դժկամությամբ են ընդունել հայկական դպրոցներում, որովհետև ազգանվանս վերջավորությունը «յան» չի նդե: Գնալով սակայն ես հասկացա, որ հայերը, եթե այդպես չվարվեին, չէին գոյատևի»:

Պատմության էջերը չբրբրենք, պատճառառեւտեանքային կապակցությունները շատ էլ չվերլուծենք, պարզապես արձանագրենք, որ աշխարհի գրեթե բոլոր անկյուններում, դարեր ի վեր, հայկական մեծ ու փոքր համայնքներ են գոյացել: Արձանագրենք նաև այն իրողությունը, որ այդ համայնքները, - մի տեղ դրանք կրոնական են համարվում, մի

այլ տեղ՝ ազգային-փոքրամասնական,- գոյացման իսկ օրից ապրել են երկակի-բարդ կյանքով: Նրանց ներքին (համայնքային) կյանքն ու օրենսդրությունը միշտ չէ, որ հաշտ է եղել հյուրընկալ երկրի կյանքի ու օրենսդրության հետ, և եթե բանը չի հասել քախման ու պայթյունի, ապա շնորհիվ այն իմաստության, որի գործելառճը համադրությունն է և ոչ թե հակադրությունը: Հակադրության լիցքերը կայծեր են արձակել ու պարպվել ներքին՝ համայնքային կյանքում, համադրության իմաստությունը կիրառել արտաքինում: Համայնքը հայ է կերտել, երկիրը՝ քաղաքացի: Օրինապահ քաղաքացի: Ամենուր են օրինապահ հայ քաղաքացիները... Եվ տարօրինակն այն է, որ օրինապահ են, որովհետև պահպանել ու պահպանում են իրենց ազգային ինքնությունը: Պահպանել ու պահպանում են նույնիսկ այն դեպքերում, երբ այս կամ այն հանգամանքների բերումով խախտվում են համայնքային համակեցության որոշ կանոններ, այլալեզու են դառնում, թերևս նաև՝ այլադավան, օտարի հետ են ընտանիք կազմում, անուն-ազգանուն են փոխում, այլ լեզվով են գրականություն ստեղծում: Օրինակները շատ են և գնալով ավելի են շատանում...

Հերթական օրինակը Ջոյա Փիրզադն է: Ինձ ու հայ ընթերցողին ծանոթ չէ Փիրզադի ողջ գրականությունը, որ ըստ ամենայնի, ծանրակշիռ է ու նշանակալից, սակայն արդեն իսկ թարգմանվածը (2014թ. «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը տպագրել է հենդակի «Ինչպես բուրբ երեկոները» պատմվածք-

ների ժողովածուն) ճիշտ այն կարիչն է, որի բաղադրությամբ ծովն եւ ճանաչում: Նա հմայում է նախ իր ուժով, առաջին հայացքից աթորեական թվացող պարզ մի լեզվով, ինչը պատումի ընթացքում սասիճանարար ձեռք է բերում անկասելի ձգողականություն: Ինչ-որ պահից սկսած, թեզ համար էլ աննկատելի, դու այլևս մոռանում ես ընթերցողիդ դերը և եթե չես էլ նույնանում հեղինակի հետ, ապա զոնե դառնում ես նրա ուղեկիցը, արարման մասնակիցը: Փոքր, սահմանափակ տարածքներում անսահմանության ձգտող այս հեղինակն աննշան թվացող մանրամասների, հարաբերությունների, կրկույրների, դեպքերի միջոցով կառուցում է, զոնե հայ ընթերցողին անծանոթ մի աշխարհ, և դու, սկսմա, ապրում ես այն վայելքը, որ ունենում է կասույցին, թեկուզև, մի դույլ շաղախով մասնակից մեկը: Հայ ընթերցողի մասին եմ խոսում, սակայն միջազգային արձագանքներից դատելով, նրա գրականությունը նույնկերպ են ընկալում նաև այլոք: Ահա մի քանի մեջբերում.

«Նա ցույց է տալիս, չի նկարագրում»: «Փիրզադի գրականությունը իշխելու ուժ ունի, թեզ գրկում է ու իր աշխարհը տանում»: «Պետք չէ գրականագետ լինել՝ տեսնելու համար նրա տեղծագործությունների ստորջրյա հոսանքները»: «Նա այն գրողներից է, որ գիտե խոսքի կախարհանքի ուժը»: Եվ այլն, և այլն...

Աշխարհն այսօր Չոյա Փիրզադին ավելի շատ գիտե, քան մենք և այս թերությունն արագորեն շտկելու պարտավորության առաջ ենք կանգնած: Մանա-